

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ РЕЦЕНЗИИ

ԳԱԼՈՒՍ ԳԱԼՈՅԱՆ. Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ. ՀԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 1999, 539 էջ:

Պատմական խոշոր իրադարձությունները, այդ թվում և ճնշված ժողովուրդների ազատագրական շարժումները, վերջիններիս վերելքներն ու վայրէջքները, հաղթանակների ու պարտությունների պատմությունները միշտ էլ սերունդների համար արդիական խորհուրդ են ունեցել, քանզի պատմական գործընթացները, անկախ դրանք հերոսական են, թե ողբերգական, ժամանակի հողովությում դարձել են ժողովուրդներին ուղեկցող մշտամնա հիշողությունները: Բայց լինում են ժամանակներ, երբ պատմությունն այնքան է մերձենում հրապարակադրությանը, որ երբեմն հավասարվում է նրան, և պատմաբանը, քաղաքական պատեհապահութական զմայլանքի մեջ, հրապարակախոսի կրքուությամբ, պատմական շատ կարևոր ու էական գործոններ հաճախ անտեսում է: Սակայն դրանք հարատև չեն լինում: Գալիս են համեմատաբար բարենպաստ ժամանակներ, երբ հնարավորություններ են ստեղծվում վերաբարձելու և խորացնելու երբեմնի բարձրացված հարցերը: Նոր իրադրության պայմաններում խոհեմ ու սիթափ հայացքը պատմաբանին տանում է ուրիշ մի ուղղությամբ՝ բաս խորքի: Զենք կարող անդիտանալ, որ հասարակական կյանքի այլ կայլ բնագավառներում ներդրած իր բացասական կողմերով հանդերձ, մեր պատմադրության համար այդպիսի բարենպաստ պայմաններ ստեղծվեցին 1980-ական թվականների վերջին, երբ հասարակական-քաղաքական կյանքի, այսպես կոչված, «լիբերալացման» նոր ժամանակները պատմադրությանը առաջադրեցին ոչ միայն նոր թեմաներ, այլև բացվեցին որոշ արգելված գոտիներ, վերանայվեցին բնորոշումները: Սակայն, ցավոք, մերձավոր անցյալում, հրմնականում կենտրոնի մեղքով, տեղատած «թերությունների» քննադատությանը չուտով հետևեց «պրովինցիալ» բար-

դությունների և հակասությունների խորքը թափանցելու դիլետանտական հանդուգն ձգտումը: Բան այնտեղ հասավ, որ պատմագրական շարժումների բազում կարևոր հարցեր ընթացք և «լուծում» էին ստանում ամենաբուռն ու սանձարձակ ամբոխավարությամբ: Բնական է, որ նման անիշխանության պայմաններում պատմության այն մշակները միայն կարող էին բավարարել դիտական պատմականության և համագդային շահից բխող առաջընթացի պահանջարկները, ովքեր դավանագործ չէին, ովքեր ունեին դիտական հայեցակետ, ովքեր ի վիճակի էին սիթափ հայացքով դիտարկելու «արգելված գոտիները», պատմության «սե» ու «սպիտակ» բժերը:

Ահա, ժամանակի հեղինակուկ ընդդիմությանն ընդգեմ հրամայականի ոգով է գրված ակադեմիկոս Գալուստ Գալոյանի «Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ.» արժեքավոր մենագրությունը, որը պատմական փաստաթղթերի և մտքի կուռ տրամաբանության մի յուրօրինակ համաձայնագիր է: Մենագրությունը պատմության ոգուն հարազատ աղբյուրագիտական իր բազայով, հատկապես արինիային նյութի օգտագործման չափաբաժնով վերջին կես դարում ստեղծված լավագույն պատմագիտական ուսումնասիրություններից է զերծ գաղաքարաքաղաքական որևէ կողմանակալությունից, ամեն կարգի նեղմիտ կուսակցական շահախնդրություններից:

Մենագրությունը բաղկացած է երկու գրքից: Առաջինը (ձեռագիր) ընդգրկում է XVI դարից մինչև 1917 թվականն ընկած ավելի քան 300-ամյա մի պատմաշրջան, երբ Հայաստանը բաժանվեց Արևելքի երկու բռնապետությունների՝ սուլթանական Թուրքիայի և շահական Պարսկաստանի միջև, և ծայր առան հայ ժողովրդի ազատագրական շարժումները երկատված հայրենիքի վերամիավորման և հայկական

անկախ պետականության վերաստղման համար։ Սակայն Հաշվի առնելով 1917-1923 թթ. պատմության լուսաբանման արդիականությունն ու հրատապությունը, հեղինակը նախընտրել է սկզբում հրապարակել մենագրության երկրորդ գիրքը։ Այս հատորի խիստ արդիականությունը հեղինակը հիմնավորում է «Ընթեղողին» խորագրով խոսքում, մասնավորապես շեշտադրելով «Հայաստանի առաջին Հանրապետության ստեղծման և անկման, դաշնակից տերությունների, ինչպես նաև Թուրքիայի կողմից Արևմտյան Հայաստանի անկախության միջադարին ճանաչման և ապա ուրացման պատճառների գիտական բննությունն այսօր դարձել է խիստ արդիական, քանի որ Հայաստանն իր անկախության հոչակումից հետո կրկին հայտնվել է մեծ տերությունների քաղաքականության ոլորտում։ Թե ինչպիսին է եղել մեծ տերությունների քաղաքականությունը Հայաստանի և Հայ ժողովդի նկատմամբ Թուրքիայում շարունակվող հայերի ցեղասպանության պայմաններում, երբ Հայ դատի խնդիրը կրկին միջազգային դիվանագիտության առյանների քննարկման առարկա էր, զուտ պատմագիտական հետաքրքրություն ներկայացնող Հարց չէր։ Այն այսօր գործնական նկատումների խնդիր է...» (էջ 5)։

Հայաստանի նկատմամբ մեծ տերությունների գարած քաղաքականությունը դնահատելի ակադեմիկոս Գ. Գալյոյանը հիմք է ընդունել փաստաթղթերի տասնյակ հատորներ կազմող այն ժողովածուները, որոնք պաշտոնապես հրապարակվել են Անտանտի երկրներում և որոնցում արտացոլված է նրանց հատկապես նուսաստանի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի գարած արտաքին քաղաքականությունը։ Այս առումով հեղինակը կրկնորել է նաև ԱՄՆ-ի կոնգրեսի մեծ հետաքրքրություններկայացնող նյութերը, որոնք օգնում են հասկանալու Հայկական Հարցի նկատմամբ ոչ միայն Միացյալ Նահանգների, այլև մյուս մեծ տերությունների քաղաքականությունը։ Գրքի ստեղծման համար, որպես լրացուցիչ աղբյուր, հեղինակն օգտագործել է օտարազգի պատմաբանների այն աշխատությունները, որոնցում լրասրանվել է

Հայկական հարցի նկատմամբ ձևավորված հասարակական կարծիքը տարբեր երկրներում։

Հայկական հարցի պատմական միջավայրը լիովին պատկերացնելու և Հայ ժողովրդի պատմության ողբերգական անցքերի շուրջ մեծ տերությունների բախումների քաղաքական իմաստը պարզաբանելու նկատմառմներով հեղինակը անհրաժեշտաբար վերլուծել է ոչ միայն թուրքական իշխանությունների գարած հայահալած քաղաքականությունը և մերկացրել թուրքական պատմագրության կեղծիքները, այլև անդրադարձել է Հայկական հարցին առնչվող միջազգային դիվանագիտության կարեռագույն իրադարձություններին, ինչպես նաև Հայ-արևելմտաեվրոպական ու Հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների նախընթաց պատմությանը։

Պատմական իրադարձությունների մեկնաբանումներին ստուգություն են Հայ ժողովել արխիվային այն բազում նոր փաստաթղթերը, որոնք, վերջին տարիներին, գրախոսվող մենագրության հեղինակը հայտնաբերել է Մոսկվայի, Լոնդոնի և Վաշինգտոնի արխիվներում։ Փաստաթղթերի համագրումը և գրանց գիտական շրջանառության մեջ գնելը անխուսափելի են դարձրել պատմագիտական դրականության մեջ տեղ գտած մի շարք հարցադրումների վերագնահատումը։ Հեղինակը իրավացիուրեն վերաբանաձեռում է տասնյակ տարիներ գրքից գիրք փոխադրվող Հայկական հարցի լուծման խորհրդային բանաձևը, գրելով, որ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո ասիական Թուրքիայի վերաբանման վերաբերյալ Անտանտի տերությունների միջն 1916 թ. ձեռք բերված Սայքս-Պիկոյի համաձայնագիրը Ռուսաստանի համար կորցրեց իր ուժը։ Վտանգվեց Ռուսաստանի օգնությամբ Արևմտյան Հայաստանը Թուրքիայի տիրապետության տակից գուրս բերելու հայերի ակնկալությունը (տե՛ս էջ 17)։ Գրքում, սկզբից մինչև վերջ, անց է կացվում այն օբյեկտիվ, իրական (որպես արդյունք) հայեցակետը, որ Ռուսաստանում Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ծնունդ առավ մի իշխանություն, որի վարած արտաքին քաղաքա-

կանության գաղափարականացված մարտավարությունն ու ռազմավարությունը Հայկական հարցի լուծման ընթացքը տարան մի ուղիղվ. որին չկարողացավ հասուլ լինել և ի շահ ազգի օգտագործել ինչպես հայ բուրժուական, այնպես էլ բոլշևիկյան հայ նորելուկ քաղաքական միտքն ու գիշանագիտությունը: Խորհրդային Ռուսաստանը Հայկական հարցը փաստորեն «հանեց» հին փակուղուց և 1917 թ. դեկտեմբերի 31-ի «Թուրքահայաստանի մասին» իր գեկրետով մտցրեց մի նոր փակուղի, որից հետագայում շահեց միայն նույն Ռուսաստանի ու եվրոպական տերությունների հովանավորությունը, օգնությունը և թողտվությունը վայելող քեմալական թուրքիան:

Ակադեմիկոս Գ. Գալոյանի գրքի գիտական և արդիական նշանակությունը բացահայտված է նրա 23 գլուխներում, որոնց տարրողունակ բովանդակության ընկալումը բանիմաց ընթերցողի համար ակնրությունի է դառնում նույնիսկ խորագրերից: «Հայաստանի Հանրապետության ծնունդը», «Փորձությունների առաջին տարին: Մեծ տերությունների քաղաքականությունը Հայաստանում», «Հայ-ադրբեջանական հակամարտությունների սրումը Ղարաբաղի, Նախիջևանի և Զանգեզուրի հարցում: Դաշնակի տերությունների գիրքորոշումը», «Հայ դատը Փարիզի խորհրդաժողովում: Միացյալ Հայաստանի անկախության ակտը: Ներքին երկառառակությունները: Միջազդային քաղաքական նոր իրադարձությունները», «Հայ դատին սպառնացող նոր փառնգը: Քեմալական Թուրքիայի ագրեսիվ նկրտումները: Խորհրդային Ռուսաստանի դաշնակից տերությունների դիրքորոշումը», «Հայ դատը Փարիզի խորհրդաժողովում: Միացյալ Հայաստանի անկախության ակտիվացումը Անդրկովկասում: Անտանտի տերությունների ընդդիմագիր քայլերը: Իրավիճակի բարդացումը Հայաստանում», «Արևմտյան Հայաստանը Թուրքական կայսրությունից ամբողջությամբ անջատելու և Հայաստանի մանդատը որևէ մեծ տերության հանձնելու խնդիրը դաշնակից տերությունների ծրագրերում», «Խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի բանակցությունները 1920

թվականի ամռանը: Խուս-Թուրքական պայմանագրի օգոստոսի 24-ի նախագիրը». «Սկրի պայմանագիրը: Մեծ տերությունների խարդավանքները», «Թուրքական ագրեսիան Հայաստանում», «Հայ-ռուսական հաշտության պայմանագրի 1920 թվականի հոկտեմբերի 28-ի նախագիրը: Դաշնակից տերությունների տագնապը: Հայաստանի առաջին Հանրապետության վերջին օրերը», «1921 թվականի մարտի 16-ի ռուս-Թուրքական պայմանագիրը».- ահա այս և բազում այլ հարցեր ու հիմնահարցեր, պատմական վճռորոշ, ճակատագրական դեպքեր և իրագարձություններ ընդգրկող 1917-1923 թթ. մեծ շրջադարձերի հենքի վրա ակադեմիկոս Գ. Գալոյանը ստեղծել է համազգային շահճի գաղափարաբանությամբ և հայեցակետով միասնական մի մնայուն աշխատություն, որի բոլոր բաղադրամասերը և իր տեսակի մեջ եզակի «Պատասխանատվության արձանագրում» խորագրով վերջաբանը գիտական ծրագրավորված-համակարգված հետեղականությամբ լուսաբանում է ժամանակաշրջանի պատմաքաղաքական հակասական միջավայրը յորպէս տեղի ունեցած դիվանագիտական պայքարի խառն ու խրթին միջավայրը. որտեղ Արևմուտքի տերությունները (տարաբախտաբար նաև նրանց նախկին դաշնակից ցարական Ռուսաստանի ժառանգորդ Խորհրդային Ռուսաստանը) իրենց շահերի համար զոհում էին կրտսեր դաշնակցին հայ ժողովրդին ընդհանրապես և նրա պետականությունը՝ մասնավորապես: Զափազանց շատ համարվեց նույնիսկ «Հայկական օջախի» ստեղծումը, քանզի Հայկական հարցի լուծման և «Հայկական օջախի» ստեղծման միջազգային ժողովներում միշտ էլ դերակատարները նույն դաշնակից տերություններն էին ու Թուրքիան (տե՛ս էջ 489): Եվ ցավալին այն է, գրքի վերջում գրում է ակադեմիկոս Գ. Գալոյանը, որ «Դաշնակից տերություններից և ոչ մեկոր առ այսօր կամք չի դրսերել նաև տեր կանգնելու հայերին տված իրուսումներին, ինչը միջազգային իրավունքի պրակտիկայում նախազեալ կարող էր հանդիսանալ պետականորեն արված հայտարարությունների համար գոնե բարոյական

պատասխանատվություն կրելուն» (Էջ 496-497):

Դաշնակից տերությունների հանցավոր քաղաքականությունը Հայկական Հարցում հանգեցրեց Թուրքիայի շահերի բացահայտ պաշտպանությանը: Ազելին՝ Անտանտի տերությունների 1922 թ. մարտին Փարիզում կայացած խորհրդաժողովը ճանաչեց Թուրքիայի սուվերենությունը նրա փաստական տիրապետության սահմաններում: Հեղինակը դա տապանաքար է համարում Հայկական Հարցի համար, մի բացահայտ մատնություն ե դավաճանություն, որն ավարտի հասցրեց Հայ ժողովրդի ե Հայաստանի նկատմամբ մեծ տերությունների տասնյակ տարիներ վարած քաղաքականությունը (տե՛ս էջ 490-493):

Ակադեմիկոս Գ. Գալոյանը Հայկական Հարցի ճախորդության պատճառները միայն արտաքին աշխարհում չի որոնում: Նա գրքի տասնյակ էջերում ցույց է տվել նաև մեր ձախորդությունների «ներքին պատճառները, որոնցից սերունդները

դասեր պետք է քաղեն» (տե՛ս էջ 33-85, 108-110, 366-386):

Ամփոփենք: Ակադեմիկոս Գալոյանի «Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ.» աշխատությունը ուշագրավ է ոչ միայն արխիվային հսկայածավալ նյութերի ընդգրկմամբ, գրված փաստերի տրամարանության լեզվով, այլև նրանով, որ գիտական պատմականության և համազգային շահի բարձրակետերից արված են եզրակացություններ, որոնք ունեն քաղաքական, գործնականարդիկան նշանակություն: Համոզված ենք, որ մենագրությունը շատ մեծ հետաքրքրություն առաջ կբերի ինչպես պատմաբանների, այնպես էլ դիվանագետների, քաղաքագետների, և, ընդհանրապես, քաղաքական հայագիտությամբ հետաքրքրվող մտավորականության միջավայրում:

ՆՈՐԱՅԻ ՍԱՐՈՒԻԽԱՆՑԱՆ